# Գունավոր ուղեղիկի առեղծվածը

Գրքի հեղինակ՝
Երևանի «Վարդանանց ասպետներ»
հ. 106 հիմնական դպրոցի
2րդ դասարանի աշակերտուհի
**Սառա Աբազարյան**

Երևան-2025

*Այս գիրքը նվիրում եմ իմ բոլոր հարազատներին*

Լինում է չի լինում, մի շատ սովորական քաղաք, շատ սովորական անունով՝ Ուղեղստան: Ուղեղստանում բնակվում էին շատ սովորական, մոխրագույն, տխուր, սահմանափակ մտածելակերպով ուղեղներ: Նրանք ոչ մի հետաքրքրություն չունեին բացի

իրենց առօրյա գործերից և նրանից, ինչն արդեն նրանց հայտնի էր: Նրանք ընտելացել էին սովորականին և հրաժարվում էին հավատալ գունավոր ուղեղիկի առեղծվածին: Դա նրանց երկրում արգելված թեմա էր և մեծամասնության կողմից հիմարություն էր համարվում: Նրանք ուղղակի վստահ էին, որ գունավոր ուղեղներ չեն լինում: Չի կարող այդպիսի բան լինել ու՝ վերջ: Նրանք իրենց փոքրիկներին անգամ արգելում էին մտածել դրա մասին: Նրանք հավատում էին սովորականին և ընդունվածին: Իսկ եթե փոքրերից մեկը դպրոցում կամ մանկապար-

տեզում կամ ուղղակի իր շրջապատում մի անսովոր բան էր ասում, որը կարող էր գունավոր ուղեղիկի նշան հանդիսանալ, նրան բոլորը ծաղրում էին, և փոքրիկը ստիպված իր մոխրագույն էությանը համակերպվում էր: Սակայն այս մեծ ուղեղները պատկերացում անգամ չունեին, որ հենց ամենասովորական բաներից են ծնվում ամենաանսովոր ու գեղեցիկ բաները: Մի գեղեցիկ օր Ուղեղստանում՝ Պարոն և Տիկին Ուղեղների ընտանիքում, մի յուրահատուկ փոքրիկ է ծնվում: Շատ խորը ու հետաքրքրաշարժ հայացքով և պրպտուն աչուկներով: Փոքրուց նա

իր հասակակիցներից տարբերվում էր ավելինն իմանալու, չվախենալու, նորը բացահայտելու, գծված սահմանները վերացնելու կարողությամբ: Փոքրիկ ուղեղիկը միշտ ձգտում էր բացահայտել այն աշխարհը, որը հաստատ ավելի գեղեցիկ էր ու գոյություն ուներ Ուղեղստանի բնակիչների պատկերացումներից դուրս: Նրան երբեք չէր ձգում սովորականը: Մի օր իր հայրիկի գրադարանում փոքրիկ ուղեղիկը հանկարծ մի հետաքրքիր գիրք գտավ՝ «Գունավոր ուղեղիկի առեղծվածը» վերնագրով: Նստեց հայրիկի հարմարավետ բազկաթոռին ու սկսեց թերթել

փոշոտված գիրքը: Գրքում գրված էր, որ ինչ-որ ժամանակ առաջ իրենց երկրում ապրել են գունավոր ուղեղ-ները: Նրանք եղել են աշխարհի ամենաուրախ, խելացի և անսովորը սիրող ուղեղները: Սակայն ինչ-ինչ պատճառներով անհետացել են, իսկ նրանց հետնորդները վերածվել են մոխրագույն, սովորականով բավա-րարվող ցեղի: Գիրքը կարդալուց հետո, ուղեղիկի սրտիկը սկսեց արագ բաբախել և նրա ներքին ձայնը հուշեց նրան, որ պետք է մեկնի ճանա-պարհորդության, որպեսզի բացահայ-

տի, թե ուր են կորել այդ գունավոր ուղեղները:

Գիշերը, երբ ողջ քաղաքը քնած էր, ուղեղիկը դուրս է սողոսկում տանից և փախչում: Նա գիտեր, որ եթե հայտնաբերեր իր ներսի գունավոր ուղեղիկին, ապա իր երկիրն ու երկրի բնակիչները վերջապես կվերափոխվեին: Երկար քայլելուց հետո նա հասավ քաղաքի ծայրին, որտեղից սկսվում էր սաղարթախիտ, անծայրածիր անտառը: Այն շատ խորհրդավոր էր և ոչ մի ուղեղ դեռ այնտեղ ոտք չէր դրել: Փոքրիկ, քաջ ուղեղիկը առաջինն

էր լինելու իր ցեղից, որ ոտք էր դնելու այդ խորհրդավոր անտառ, որի մասին հետաքրքիր լեգենդներ էին պտտվում: Ասում էին մեկ անգամ այնտեղ մտնողը էլ նույնը չի լինում: Գեղեցիկ աստղա-զարդ գիշեր էր: Ուղեղիկն ուղղակի վստահ էր, որ առաջին իսկ պահից անտառում ինչ-որ հետաքրքիր բան է կատարվելու: Ու շուտով, շատ շուտով նա կկարողանա դեն նետել այդքան գարշելի մոխրագույն հագուստն ու վերջապես կկարողանա ապացուցել իր հարազատներին և Ուղեղստանի բնակիչներին, որ գունավոր ուղեղներ լինում են: Վստահ քայլերով ուղեղիկը

շարժվում էր առաջ: Նրա փոքրիկ սրտիկն ուրախությունից թրթռում էր: Նա վայելում էր անտառն իր ողջ հմայքով: Նրա ականջին էին հասնում հիասքանչ թռչունների դայլալյը, քամու անհասկանալի, բայց միևնույն ժամանակ հիասքանչ երգը: Երբ մի ակնթարթ հայացքը նետեց իր մոխրագույն հագուստին, նկատեց, որ ինչ որ անհասկանալի պուտիկներ են հայտնվել դրա վրա: Երբ ավելի մոտիկից նայեց տեսավ, որ դրանք գունավոր էին: Անկեղծ չհասկացավ, թե դրանք որտեղից հայտնվեցին: Բայց ավելի

համոզվեց, որ մոտ է գունավոր ուղեղիկի առեղծվածը բացահայտելուն:

Շուտով նա հասավ մի բացատի: Բացատում քար լռություն էր տիրում, բայց միևնույն ժամանակ ինչ-որ տարօրինակ խորհրդավորություն կար: Շատ էր հոգնել ուղեղիկը: Նստեց մոտակա քարին, որ մի քիչ հանգստանա: Հանկարծ թփերի ետևից մի ճռթյուն լսեց: Շրջվեց և գուշակեք, թե ինչ տեսավ: Զարմանքից բերանը բաց մնաց: Թփերի ետևից նրան էր նայում մի ծեր, իմաստուն հայացքով ուղեղ: Նրա ողջ հագուստը խայտաբղետ

գույներով էր պատված: Նրանից մի անբնական փայլ էր առկայծում, որը վարակիչ էր: Նա մոտեցավ փոքրիկ ուղեղիկին և ասաց.

- Բարև փոքրիկ: Ի՞նչ ես կորցրել անտառում:

- Բարև խայտաբղետ, լուսավոր և գունավոր իմաստուն ծերուկ, - հիացմունքը չկարողացավ զսպել ուղեղիկը: - Ես ուղեղիկն եմ և անտառ եմ եկել գունավոր ուղեղի առեղծվածը բացահայտելու:

- Հետաքրքիր է: Գիտե՞ս, քչերն են քեզ նման քաջ: Քչերն են, որ չեն

վախենում բացահայտել այդ գաղտ-
նիքը: Քչերն են, որ երբևէ կարող են
դուրս գալ իրենց ընդունված կաղա-
պարներից ու ձգտել հասնել անիրա-
կանին, անսովորին: Դե ինչ, արի՛ իմ
ետևից:

Ծերուկը փոքրիկ ուղեղիկին
տարավ մի հիասքանչ ուռենու մոտ,
որը կարծես անտառի թագուհին լիներ:
Նրա վարսերը ոսկեզօծ էին ու հասնում
էին մինչև գետին:

- Մտի՛ր, - ասաց Ծերունին:
Այնտեղ քեզ է սպասում մի կախար-
դական աշխարհ, որը կօգնի քեզ

բացահայտել գունավոր ուղեղիկի առեղծվածը:

Առանց վարանելու փոքրիկ ուղեղը ներս մտավ: Առաջին հայացքից դա հասարակ ուռենի էր թվում: Դե, միակ տարօրինակությունը նրա ոսկեզօծ վարսերն էին: Բայց երբ ուղեղիկը հայտնվեց ներսում նրա առջև մի զարմանահրաշ աշխարհ բացվեց: Ինչ-որ տեղից մի քնքուշ ձայն ասաց.

- Բարև փոքրիկ: Ես գիտեմ դու ինչ ես փնտրում: Ուզում եմ ասել, որ փնտրողը միշտ գտնում է: Դու հիմա գտնվում ես մի վայրում, որտեղ ամեն

նոր բան, ամեն նոր երևույթ, զգացողություն, միտք, երազանք օգնում է ուղեղն էլ ավելի գունավորել: Նայի՛ր աջ: Այստեղ տառերն են: Դրանք բազմազան ու զարմանահրաշ են: Դրանք օգնում են, որպեսզի կարողանանք խոսել, գրել և կարդալ: Իսկ երբ կարողանում ես կարդալ և գրել, կարողանում ես բացահայտել գրքերի կախարդական աշխարհը, որը քեզ օգնում է գունավորել քո մոխ-րագույն ուղեղիկը ինչ գույնով, որ ուզես: Քեզանից ձախ՝ թվերն են: Սա էլ մեկ ուրիշ զարմանահրաշ մոլորակ է, որն օգնում է քեզ բազմաթիվ

հաշվարկներ անել: Մինչև անգամ տիեզերք հասնել: Եվ եթե նրանց հետ էլ ընկերանաս, ապա նրանք կօգնեն, որ էլ ավելի խելացի լինես և էլ ավելի գունավոր: Վերևում նոտաներն են, նրանք բացահայտում են ստեղծագործ հոգու զարմանահրաշ աշխարհը և վերածում այն երաժշտության: Իսկ երաժշտությունը մի այլ գունապնակ է, որը եթե ուսումնասիրես, ապա ավելի կգունավորվես: Աշխարհները շատ են, փոքրիկ, բայց դրանք բացահայտող-ները քիչ: Միշտ հիշիր, չկան մոխրագույն ուղեղներ: Դրանք երբեք էլ չեն եղել: Դու ինքդ քո մոլորակի

գույներ ստեղծողն ես: Որքան շատ բան իմանաս ու բացահայտես, այնքան ավելի գունավոր կլինես: Մի վախեցիր դժվարություններից, որովհետև դրանք փոքրիկներին ավելի ուժեղ են դարձնում: Չվախենաս երազել, որովհետև երազանքները մեզ տանում են հեռուներ և օգնում ստեղծել աներևակայելին: Եվ վերջում չթողնես ոչ ոքի սահմանափակել քեզ: Հիշի՛ր, որ ուղեղը սահմաններ չունի, իսկ գունավոր ուղեղիկն առավե՛լ ևս:

Երբ ուղեղիկը դուրս եկավ ուռենու ճյուղերի տակից՝ նա փայլատակում էր:

Նա գունավորվել էր և նրա գունավոր փոքրիկ պուտիկները վերածվել էին հսկայական գույների շքերթի: Կարմիր, կապույտ, դեղին, մանուշակագույն, զմրուխտե և շատ ավելի շատ գույներ, որոնք դեռ ոչ մեկ չի բացահայտել ու գտել: Ոգևորված նա արագ վազեց դեպի տուն: Նա վազում էր ու չէր հավատում, որ իր մոտ ստացվեց: Ուղեղստանի բնակիչներն արդեն արթնացել էին և անցել իրենց առօրյա, սովորական գործերին: Հանկարծ քաղաքի ծայրամասում ծիածանագույն լույս նկատեցին: Այն այնքան փայլուն էր, որ կուրացնում էր

քաղաքի բնակիչներին, այնքան լուսավոր, որ անհնար էր նայել: Սկզբում չհասկացան, թե դա ինչ է: Բայց շուտով տեսան փոքրիկ ուղեղի-կին, որը դեպի քաղաքի հրապարակ էր վազում: Նա այնքան գունավոր էր ու գեղեցիկ, որ նրա գունավոր լույսիկից Ուղեստանի բնակիչների սովորական սրտիկներից սկսեց ծիածանագույն լույս ճառագել: Ուղեղիկը կանգնեց հրապարակի կենտրոնում և բացականչեց.

- Իմ սիրելի քաղաքի բնակիչներ: Գունավոր ուղեղիկը հեքիաթ չէ. այն

իրականություն է: Գունավոր են այն ուղեղները, որոնք չեն սահմանա-փակում իրենց երազելու, սովորելու, նորը բացահայտելու, կյանքը սիրելու և ստեղծագործելու կարողությունը:

Երկնքից երեք խնձոր ընկավ: Մեկը՝ ուղեղիկին, մեկը՝ պատմողին, մեկն էլ էս հեքիաթը գրողին:



Գունավոր ուղեղիկի առեղծվածը/
Աբազարյան Ս.- Եր.: Հեղ.հրատ., 2025.-
20 էջ: ISBN 978-9939-0-5083-6